ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ս. Ա.

Միջազգային նոր իրավիճակը, ստեղծված 1938-1939 թթ., մասնավորապես ֆաշիստական Գերմանիայից բխող ռազմական սպառնալիքը և այդ երկրին Ավստրիայի միավորման գործընթացները տարածաշրջանի երկրների համար դարձան ամենամտահոգիչ գործոնները: Ավստրիայի միավորումը Գերմանիային ժամանակավորապես դուրս մղեց այդ երկիրը միջազգային քաղաքականությունից[1]: Դրանից հետո միջազգային հարաբերությունները կտրուկ վատթարացան. մասնավորապես Լոնդոնում, Մոսկվայում և Փարիզում անհանգստությունը պայմանավորված էր մոտալուտ պատերազմի սպառնալիքներով:

Եվրոպայում ահագնացող վտանգը կանխելու և հետագա գործընթացները հստակեցնելու համար Մեծ Բրիտանիայի փոխվարչապետ Չեմբեռլենը Բեռլինի դեսպանատան միջոցով Հիտլերին տեղեկացրեց իր՝ Գերմանիա կատարելիք հնարավոր պաշտոնական այցի մասին[2]: Հանդիպման հիմնական թեման Հիտլերի հետագա քաղաքականությունն էր լինելու, քանի որ արդեն իսկ հայտնի էր, որ Գերմանիան պատրաստվում է Չեխոսլովակիան նույնպես միակցել Գերմանիային:

Եվրոպայում այդ լարված քաղաքական մթնոլորտը և ֆաշիստական Գերմանիայի զավթողական քաղաքականությունը ազդանշան էին Թուրքիայի համար՝ արտաքին քաղաքական հարաբերություններում հնարավորինս սխալներ թույլ չտալու համար: Աստիճանաբար աճում էր Թուրքիայի դերը միջ-ազգային ասպարեզում, քանի որ այն ուներ աշխարհագրական բարենպաստ դիրք՝ գտնվելով Ասիայի և Եվրոպայի սահմանագծին: Թուրքական պետությունը ճկուն քաղաքականության շնորհիվ փորձում էր տարածաշրջանում եվրոպական երկրների արտաքին քաղաքական նվաճումները հօգուտ իրեն ծառայեցնել:

Ազգերի լիգայի գլխավոր ուժ հանդիսացող Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան մի կողմից շարունակում էին կայուն քաղաքական և բարիդրացիական հարաբերություններ պահպանել եվրոպական մյուս երկրների, այդ թվում՝ նաև ֆաշիստական Գերմանիայի հետ, իսկ մյուս կողմից փորձում էին խոչընդոտել գերմանա-թուրքական հարաբերությունները: Առհասարակ, այդ

---

[1] *Հիտլերը նույնիսկ փոխեց պատմական Ավստրիայի անունը՝ Օստմարկ, իսկ Վիեննան դարձավ Գերմանիայի քաղաքներից մեկը (տե՛ս* Ширер У. *Взлет и падение 3-го Рейха, М., 2004, с. 375):*

[2] *Հիտլերը համարեց այն իր արտաքին քաղաքականության հաղթանակը, քանզի հայտնի էր, որ Չեմբեռլենն ընդհանրապես չի օգտվում ինքնաթիռներից, սակայն պատրաստ էր յոթ ժամ թռչել, որպեսզի հանդիպեր իր հետ:*

ժամանակաշրջանում գերմանա-թուրքական հարաբերություններում տնտեսական բաղադրիչը կարևորագույններից մեկն էր, բայց միաժամանակ օգտվելով ֆաշիստների հզորությունից՝ Թուրքիան փորձեց նաև զավթողական քաղաքականություն իրականացնել ի հաշիվ Բալկանյան երկրների, նույնիսկ իրեն միակցեց Ալեքսանդրեթի սանջակը՝ Իսկենդերուն և Անթալիա քաղաքներով:

1938 թ. նոյեմբերի 10-ին երկարատև հիվանդությունից հետո Ստամբուլում մահացավ Թուրքիայի Հանրապետության նախագահ Քեմալ Աթաթուրքը: Նոյեմբերի 11-ին Թուրքիայի նոր նախագահ ընտրվեց Իսմեթ Ինոնյուն (1938-1950), որը տարաձայնություններ էր ունեցել Աթաթուրքի հետ և որոշ ժամանակ հեռու էր կանգնած պետական գործերից: Վարչապետի պաշտոնը շարունակեց զբաղեցնել Ջ. Բայարը[3]: Այդ ծանր և դժվարին պահին Ինոնյուն շարունակեց երկրի քաղաքական և տնտեսական բարեփոխումների գործընթացը: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը նա կարողացավ պահպանել Թուրքիայի չեզոքությունը և հետևել արտաքին քաղաքական խմորումներին: Ինոնյուն վարում էր ճկուն քաղաքականություն եվրոպական երկրների հետ՝ այն ենթարկելով Թուրքիայի ազգային շահերին:

Թուրքիային տալով կարևոր նշանակություն՝ Հիտլերը 1939 թ. սկզբին այնտեղ դեսպան է ուղարկում Ֆրանց ֆոն Պապենին (1939-1944 թթ.)[4]: Արտգործնախարար Ռիբենտրոպը Ֆրանց ֆոն Պապենին Անկարայում պաշտոնապես դեսպան նշանակեց ապրիլի 7-ին, երբ ֆաշիստական Իտալիան գրավեց Ալբանիան (հավանաբար ապրիլի 12-ին Գերելսի Ստամբուլ կատարած այցը Պապենի նշանակման հետ էր կապված): Նա ապրիլի 14-ին հեռացավ Թուրքիայից, քանի որ նույն օրը Հիտլերի ծննդյան հիսնամյակը շնորհավորելու համար Թուրքիայից պատվիրակություն մեկնեց Գերմանիա: Պատվիրակության մեջ էին Ալի Ֆուաթ Ջեբեսոյը, զինված ուժերի գլխավոր շտաբի երկրորդ հրամանատար Ասըմ Գյունդուզը, Նեջմեթին Սադաքը, Ջահիթ Յալչընը, Ֆալիհ Ռֆքը Աթայը և Նադիր Նադին, այսինքն՝ բարձրաստիճան քաղաքական գործիչներ, զինվորականներ և առաջատար լրագրողներ: Պատվիրակությունը ապրիլի 20-ին հանդիպեց Հիտլերի հետ և Թուրքիա վերադարձավ մայիսի1-ին[5]:

Պապենին Անկարայում դեսպան նշանակելը պատահական չէր, քանի որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Պապենը Թուրքիայում ճանաչված քաղաքական գործիչ էր և միշտ հանդես է եկել իբրև գերմանա-թուրքական մերձեցման ջատագով: Պապենի պաշտոնական նշանակումը տեղի ունեցավ միայն ապրիլի 18-ին[6]:

---

[3] **Миллер А. Ф.** *Очерки новейшей истории Турции, М., 1948. с. 197.*

[4] **Jones Larry Eugene.** *Franz von Papen, the German Center Party and the Failure of Catholic Conservatism in the Weimar Republic (Central European History, N 38(2), p. 191-217).*

[5] *Նույն տեղում:*

[6] *Գերմանիայի արտաքին գործերի նախարարության՝ ապրիլի 18-ին պատրաստած զեկույցում տեղեկություն է հաղորդվում, որ Ռումինիայի արտաքին գործերի նախարարը ապրիլի 8-ից 9-ը Ստամբուլում Սարաջաոլուի հետ հանդիպում է ունեցել: Այդ հանդիպման*

Պապենը Թուրքիայում ակտիվություն ցուցաբերեց ոչ միայն դի-վանագիտության ասպարեզում, այլև դիվերսիայի ու լրտեսության մեջ: Իր գալու օրվանից Թուրքիայում ֆաշիստական շրջանների ակտիվ աջակցությամբ ֆոն Պապենը ստեղծում է լրտեսական-դիվերսիոն կազմակերպություններ, որոնք պետք է կատարեին սադրիչ աշխատանքներ՝ ուղղված Մերձավոր և Միջին Արևելքի և ամենից առաջ Սովետական Միության դեմ: Իր գործունեության մեջ ֆոն Պապենը հասավ այն բանին, որ գաղտնի բանակցությունների ժամանակ թուրքերին առաջարկեց մի շարք տարածքներ գրավել արաբական երկրներից: Ֆոն Պապենը ոչ մի միջոց չէր խնայում թուրքական կառավարության առանձին անդամներին, թուրքական մամուլը կաշառելու և նոր հետախույզներ ու դիվերսանտներ հավաքագրելու համար: Նա կազմակերպեց լրտեսադիվերսիոն խմբեր նաև Թուրքիայի հարևան երկրներում:

Ֆոն Պապենի միջոցով Գերմանիան կարողացավ իր ազդեցության տակ վերցնել Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը, որոշակիորեն ազդել թուրքական բանակի վրա: Այդ ընթացքում թուրքական բանակի վերազինման և ռազմական օբյեկտների կառուցման գործում մեծ էր գերմանական զինվորական մասնագետների դերը: 1938 թ. Բեռլինում Գերմանիայի արտաքին գործերի նախարարը թուրքական պատվիրակությունից ուղղակիորեն պահանջեց, որ Թուրքիան միավորվի ֆաշիստական բլոկին, սակայն Մենեմենջլիողլին մերժեց այդ պահանջը՝ հիմնավորելով, որ Թուրքիան մտադիր չէ վերադառնալ Օսմանյան կայսրության նվաճողական ժամանակաշրջան[7]: Թուրքիան հասկանում էր, որ եթե միանա ֆաշիստական բլոկին, ապա, առաջին հերթին, Մեծ Բրիտանիայի և Սովետական Միության հետ տնտեսական հենքի վրա ստեղծված կառուցողա-կան հարաբերությունները փակուղի կմտնեն, ինչը այդ տարիներին բնավ ձեռնտու չէր Թուրքիային: Մյուս կողմից հնարավոր չէր փոխել քաղաքական ուղեգիծը Գերմանիայի հանդեպ՝ ելնելով երկկողմ տնտեսական հարաբերություններից: Թուրքիան, սակայն, միշտ կարևորում էր այն, որ ոչ մի պետության հետ չպետք է հարաբերությունները վերջնական փուլ հասցնել, այլ միշտ թողնել գործընթացի շարունակությունը: Սակայն Գերմանիան, Իտա-լիայի միջոցով թափանցելով Բալկանյան երկրներ, նորից արթնացրեց Թուրքիայի տագնապը ֆաշիստական Գերմանիայի հանդեպ: Այդ ժամանակ թուրքական կառավարությունը, կարելի է ասել, «սարսափում էր» Գերմանիայի կամ Մեծ Բրիտանիայի հետ որևէ կոնֆլիկտ ունենալուց:

Քաղաքական հարաբերություններին զուգահեռ՝ շարունակվում էին նաև տնտեսական հարաբերությունները, և 1938 թ. ամռանը Թուրքիայի արտգործնախարար Մենեմենջլիողլին և Ռիբենտրոպը բազմաթիվ

հիմնական պատճառը անվտանգության հետ կապված հարցեր էին: Բացի այդ, զեկույցում նշվում էր, որ Գերմանիան կասկածներով էր վերաբերվում այն տեղեկություններին, թե Ռումինիան առաջարկել է Թուրքիայի և Խորհրդային Միության միջև համաձայնագիր կնքել:

[7] **Zehra Önder.** *Die Türkische Aussenpolitik im Zweiten Weltkrieg, München-Oldenburg, 1977, S. 395.*

հանդիպումներ են ունեցել, որոնց թվում հատկանշականը հուլիսյանն էր, որտեղ Մենեմենջլիողլին նշեց, որ Թուրքիան ցանկանում է պահպանել լավ հարաբերությունները Գերմանիայի հետ, սակայն չի մասնակցի գերմանական որևէ զավթողական քաղաքական միջոցառման, և այն տեսակետը արտահայտեց, որ Թուրքիան հիմնվում է միայն բարիդրացիական հարաբերությունների վրա և հանդես է գալիս որպես չեզոք երկիր[8]: Այդպիսի կեցվածքը բնականաբար թևաթափ չարեց Գերմանիային, քանի որ ֆաշիստները համոզված էին, որ Թուրքիան, եթե իրենց զավթողական ծրագրերին մասնակից չէ, ապա չեզոք դաշնակից կարող է լինել: Մեր կարծիքով, այս հանդիպումը կառուցողական էր, քանի որ քննարկվեցին ոչ միայն քաղաքականությանը, այլև տնտեսական խնդիրներին վերաբերող հարցեր: Հիտլերականներին պարզ դարձան Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակները: Նախարարը ակնարկեց, որ թուրքական կառավարությունը դեռևս խնդիրներ ունի Ֆրանսիայի հետ՝ կապված Ալեքսանդրեթի սանջակիի հետ: Ռիբենտրոպը, այս ամենը ասելով, կարծում ենք, միայն մի բան էր ուզում հասկացնել Թուրքիային, որ միանալով ֆաշիստական բլոկին՝ շատ կարևոր քաղաքական խնդիրներ կարելի կլիներ լուծված համարել՝ հօգուտ Թուրքիայի: Քաղաքական տեսանկյունից Ռիբենտրոպ-Մենեմենջլիողլի հանդիպումը կարելի է գնահատել իբրև միասնական մոտեցում քաղաքական որոշ խնդիրների, և որ գերմանա-թուրքական հարաբերությունները մնում են անփոփոխ[9]:

Լոնդոնում և Անկարայում սկսվեցին նոր բանակցություններ փոխօգնության պայմանագիր կնքելու համար: 1939 թ. մայիսի 12-ին Լոնդոնում և Անկարայում միաժամանակ հրապարակվեց փոխօգնության մասին անգլո-թուրքական պաշտոնական համաձայնագիր: Վարչապետ Ռ. Սայդամը, մեջլիսում քննարկելով անգլո-թուրքական պաշտոնական համաձայնագիրը, Թուրքիայի արտաքին քաղաքականության կուրսը ձևակերպեց հետևյալ կերպ. «Մինչև վերջին ժամանակները թուրքական կառավարության քաղաքականությունը հիմնականում ուղղված էր այն բանին, որ պահպանի չեզոքությունը»[10]:

Բեռլինում Թուրքիայի դեսպան Համդի Արփագը Գերմանիայի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպման ժամանակ բացատրեց, որ «Թուրքիայի համաձայնագրերը և չեզոքության քաղաքականությունը տարբեր երկրների հետ բխում են միայն Թուրքիայի շահերից և ուղղված են միայն նրա անվտանգությանը»[11]: Արտգործնախարարին հետաքրքրող հիմնական ոլորտը թուրք-խորհրդային հարաբերություններն էին, քանի որ 1930-ական թվականներին Խորհրդային Միությունը և Թուրքիան միջազգային ասպարեզում համաձայնեցված էլույթներ էին ունեցել խաղաղության պահպանման և

---

[8] *Die Türkische Frage. Wie Deutschland Zukunft entschieden wird. von Peter Winkelvoß. Taschenbuch-15, Oktober, 2008, S. 158.*

[9] *Նույն տեղում:*

[10] **Живкова Л.** *Англо-турецкие отношения 1933-1939, М., 1975, с. 129.*

[11] *Նույն տեղում:*

ամրապնդման մի շարք կարևոր հարցերում: Այդպես էր, երբ Եվրոպայում ստեղծվել էր լարված վիճակ՝ կապված հիտլերյան բանակը և նավատորմը զինելու որոշման, ինչպես նաև զինաթափմանը նվիրված կոնֆերանսի ձախողման հետ: Պատրաստվելով պատերազմին՝ Գերմանիան ձգտում էր տիրել Բոսֆորի ափերին: Օրինակ, «Կրուպ» ընկերությունը Բոսֆորի ափին ձեռնարկել էր նավաշինարարության, բունկերային կայանների կառուցման աշխատանքների, սակայն Թուրքիան, Անգլիայի հետ նախնական համաձայնության գալով, հրաժարվեց գերմանական այդ ընկերության հետ համագործակցելուց և այդ կերպ կայունացրեց թուրք-անգլիական հարաբերությունները: Ինչպես Ռ. Կորխմազյանն է նշում, Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայում հիմնականում ուղղված էր հիտլերյան Գերմանիայի ու Սովետական Միության հետ հարաբերությունների վատթարացմանը[12]: Գերմանական գլխավոր շտաբը հետագայում ինչպես էլ նախապատրաստեր իր ռազմական գործողությունները, Թուրքիան այնտեղ անփոփոխ պահպանում էր իր ռազմավարական նշանակությունը: Այսպես, Սովետական Միության դեմ ծրագրված պատերազմում կարևոր էր Կովկասյան ռազմաճակատի ստեղծումը Թուրքիայի տարածքում, ինչպես նաև ապագայում Բաքվի գրավումը[13]: Քաղաքական դաշտում Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի վրա հարաբերականորեն դեռևս թույլ էր: Թուրքիայի գլխավոր շտաբը ավելացրեց գերմանական ինժեներների թիվը, որոնք թուրքական զինված ուժերին (բանակը, նավատորմը) վարժեցնում էին գերմանական օրինակով: Սակայն սրանով չէր սահմանափակվում թուրքական և գերմանական ռազմական շրջանակների միջև եղած կապը: Էլ ավելի մեծ չափով էր առաջ գնում անգլո-թուրքական քաղաքական համագործակցությունը, որին Թուրքիան այնքան ձգտում էր Իտալիայի նվաճողական քաղաքականության պատճառով: Արտաքին քաղաքականության ուղեգիծը շարունակելով Մեծ Բրիտանիայի հետ՝ Թուրքիան անկանխատեսելի իրավիճակ ստեղծեց Գերմանիայի համար, որի հետևանքով Գերմանիան պատժամիջոցներ ձեռնարկեց Թուրքիայի հանդեպ: Մարտի սկզբին Գյորինգը Հիտլերի համաձայնությամբ կանգնեցրեց «240 միլիմետր» տրամաչափով «Շկոդա» հրանոթների մատակարարումը Թուրքիային, որը նախատեսված էր Դարդանելի վերառազմականացման համար, ինչպես նաև սառեցվեց 150 մլն մարկի փոխանցումը Թուրքիա, որի շուրջ համաձայնության էին եկել Ֆունկը և թուրքական կառավարությունը[14]: Ֆոն Պապենը Իսմեթ Ինոնյուի հետ հանդիպման ժամանակ առաջ քաշեց Գերմանիայի պահանջները, բայց նշեց, որ Գերմանիան կշարունակի ֆինանսական ու

---

[12] **Корхмазян Р. С.** *Турецко-германские отношения в годы второй мировой войны, Е., 1977, с. 26.*

[13] **Կորխմազյան Ռ. Ս.** *Գերմանա-թուրքական հարաբերությունների հարցը 1933-1939 թթ. (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. V, Ե., 1970, էջ 199):*

[14] **Ulriche Schile.** *Kein Friede mit Deutschland. Die geheimen Gespräche im Zweiten Weltkrieg 1939-1941, S. 121.*

ռազմական աջակցություն ցույց տալ Թուրքիա- յին: Թուրքիան կարճ ժամանակում պետք է դադարեցներ թուրք-անգլիական քաղաքական նախաձեռնությունները և հնարավորինս շուտ հրաժարվեր դրանցից: Սեփական շահերի սպառնալիքի դեպքում միայն նա կհամագործակցեր Անգլիայի հետ, միաժամանակ, պետք է հրաժարվեր Բալկանյան երկրների վրա ճնշումներ գործադրելուց: Գերմանա-թուրքական քաղաքական լարված իրավիճակից փորձեցին օգտվել Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան՝ Թուրքիային օժանդակեցին ռազմական սարքավորումներով, իսկ Գերմանիայի փորձերը՝ տնտեսապես օգնելու Թուրքիային, անիրագործելի մնացին: Այդ ժամանակ միջազգային քաղաքական դաշտում շատ կարևոր քաղաքական տեղաշարժեր եղան: Իտալիան միացավ Մոնտրեի համաձայնագրին, Գերմանիան, պատրաստվելով մեծ պատերազմի, ցանկանում էր նորից իր վերահսկողությունը հաստատել թուրքական օդային ուղիներում, երկաթգծերի և ճանապարհների վրա, որտեղ հաշվի էր առել նաև Թուրքիա–Իրան կապը, քանի որ անհրաժեշտության դեպքում կարող էր օգտագործվել նաև իրանական տարածքը, որպես միջանկյալ ուղի: Պատահական չէ, որ 1938 թ. բացվեց նոր օդային ուղի՝ Դամասկոս-Բաղդադ–Թեհրան–Քաբուլ և Բեռլին–Աթենք–Ռոդոս կղզի, իսկ սկսած 1930 թ.՝ գերմանական «Դեյչելուֆտհանզա» կազմակերպությունը սպասարկում էր Բեռլին–Ստամբուլ–Անկարա ուղին, որը գործում է մինչև օրս[15]:

Քաղաքական և դիվանագիտական անվտանգությանն ուղղված քայլերով թվում էր, թե Թուրքիան և Գերմանիան պետք է արդեն մոտենային վերջնագծին, սակայն մեծ վտանգ էր սպառնում հարավարևելյան Եվրոպային, և նշանակություն չուներ, թե որ կողմե- րից էր դա՝ ֆաշիստական Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից կամ հատկապես Իտալիայից ու Խորհրդային Միությունից: Պատերազմի առիթ կարող էին դառնալ նաև բալկանյան տարածաշրջանում դեռևս չլուծված խնդիրները: Այստեղ Թուրքիայի քաղաքականությունը պետք է ավելի ճկուն լիներ. հարկավոր էր ստեղծել միասնական անվտանգության բալկանյան բլոկ և ապահովել հարավարևելյան երկրների անվտանգությունը: Առաջնորդվելով այս ծրագրով՝ Թուրքիան կարողացավ փնտրել և գտնել համաձայնության ճանապարհ Բալկանյան երկրների հետ, որոնցից մի քանիսը կողմ էին անկախության և անվտանգության առաջարկներին, ինչպես Բուլղարիան: Շարունակությունը եղավ 1933 թ. նոյեմբերի 27-ին կնքված համաձայնագիրը Ռումինիայի և Հարավսլավիայի միջև, ըստ որի՝ եթե իրենցից մեկը հարձակողական քաղաքականություն վարի մյուսի դեմ, ապա պայմանագիրը չեղյալ կհայտարարվի:

Այս բոլոր պայմանագրերի կնքումը Թուրքիայի ծրագրերի մի մասի լուծումն էր միայն և որոշակի նախադրյալներ՝ ապահովելու Բալկանների անվտանգությունը, որի վկայությունն էր 1934 թ. փետրվարի 9-ին կնքված Բալկանյան համաձայնագիրը: Իհարկե, այդ դաշինքը չիրականացվեց բալկանյան երկրներում, նույնիսկ Ալբանիան և Բուլղարիան չտեղեկացվեցին

[15] **Cemil Koçak.** *Türk-Alman ilişkileri iki dünya savaşı arasındaki Dönemde Siyasal, Kültürel, Askeri ve Ekonomik Ilişkileri, Ankara, 1991, s. 75.*

և չմասնակցեցին համաձայնագրի ընդունմանը: Այն երկրները, որոնք չմասնակցեցին այդ ծրագրին, հետագայում ամեն կերպ խոչընդոտում էին մյուսների ձեռնարկումները: Դրանից կարողացավ օգտվել միայն Թուրքիան, որը մեծ ջանքերի գնով պահպանեց այն մինչև պատերազմը: Ճիշտ է, նա որոշ չափով բարելավեց հարաբերությունները Բուլղարիայի հետ, սակայն չկարողացավ բալկանյան տարածաշրջանում ունենալ ազդեցություն[16]:

Թուրքիայի պայմանագրային քաղաքականությունը շատ հեռու էր միջերկրածովյան քաղաքականությունից: Այս հարաբերություններում գլխավոր խնդիրը ֆաշիստական Իտալիան էր, որից Թուրքիան դեռ վտանգ էր սպասում: Իտալիայի քաղաքական դիրքը Դոդեկաններում տվյալ պարագայում դիտվում էր որպես սպառնալիք, և թուրք-իտալական հարաբերությունները 1928 թ. մայիսի 30-ին կնքված չեզոքության պայմանագրով անգամ լարված էին: Այսպիսի քաղաքականությամբ էլ Թուրքիան առաջնորդվում էր Անգլիայի և Ֆրանսիայի հետ՝ կապված Սիրիայի մանդատի հետ, քանի որ Սիրիան և Իրաքը Թուրքիայի հարավային հարևաններն էին: Տարածքային խնդիրները կապված էին Թուրքիայի և արևմտյան տերությունների հետ, որոնք չէին վստահում Իտալիային: Այս ուղղությամբ նույնպես Թուրքիան քայլեր էր ձեռնարկում և փորձում էր փոխել ստատուս քվոն[17]:

НЕМЕЦКО-ТУРЕЦКИЕ ПОЛИТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В ПРЕДДВЕРИИ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

БАГДАСАРЯН С. А.

Резюме

В 1930-х годах военная угроза Германии стала региональной проблемой для соседних стран. Угроза войны привела к дестабилизации международных отношений. Исходя из сложной международной обстановки в Европе, Турция разработала более гибкую внешнюю политику в отношении Германии. В регионе возросла геополитическая роль Турции в основном в силу ее выгодного географического положения.

[16] **Zehra Önder,** *նշվ. աշխ., էջ 399:*

[17] *The Brutal Friendship. Mussolini, Hitler and the Fall of Italian Fascism, N. Y., 1962, p. 482.*

GERMAN-TURKISH POLITICAL RELATIONS ON THE EVE OF WORLD WAR II

S. BAGHDASARYAN

Abstract

In 1930s, the military threat from Germany was a regional challenge for the surrounding countries. After Austria became a part of Germany, there was a sharp destabilization in international relations caused by the threat of the war. In this difficult international situation in Europe, Turkey had to develop more sensitive foreign policy towards Germany. Turkey's geopolitical role gradually increased in the region mostly due to its favorable geographic position. While developing stable relations with Germany, Turkey managed to maintain its important role in the regional processes.